

**ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ**

<p><b>Պաշտոնի (գբաղմունքի) անվանումը</b></p>	<p align="center">1004 Էլեկտրամատակարարում (ըստ ճյուղերի) <b><u>Տեխնիկ-Էլեկտրոնիկ</u></b></p>
<p><b>I. Դերը</b></p>	<p>Իրականացնում է արդյունաբերական, կոմունալ-կենցաղային, գյուղատնտեսական ու քարշային սպառիչների էլեկտրամատակարարման սարքավորումների և էլեկտրաընդունիչների սպասարկում, վերանորոգում, տեղակայում, կարգաբերում, շահագործում և վերակառուցում, ինչպես նաև էլեկտրաէներգիայի հաշվառման սարքերի աշխատանքի վերահսկում և փոխարինում՝ ըստ նորմատիվային պահանջների:</p>
<p><b>II. Խնդիրների բնագավառները</b></p>	<ol style="list-style-type: none"> <li>1. Առաջադրված խնդրի ձևակերպում և կոնկրետացում,</li> <li>2. Էլեկտրամատակարարման սարքավորումների և էլեկտրաընդունիչների սպասարկում, վերանորոգում, տեղակայում, կարգաբերում, շահագործում և վերակառուցում՝ նորմատիվային, նախագծային, տեխնիկական և տեխնոլոգիական փաստաթղթերով սահմանված պահանջների կատարմամբ,</li> <li>3. Նախապատրաստական աշխատանքների իրականացում,</li> <li>4. Էլեկտրամատակարարման սարքավորումների և էլեկտրաընդունիչների տեխնիկական վիճակի գնահատում և վերլուծություն,</li> <li>5. Էլեկտրամատակարարման սարքավորումների և էլեկտրաընդունիչների տեղակայում, վերակառուցում, կարգաբերում և փորձարկում, շահագործում և վերանորոգում, անսարքությունների, խափանումների և այլ թերությունների բացահայտում և վերացում,</li> <li>6. Էլեկտրամատակարարման սարքավորումների և էլեկտրաընդունիչների շահագործման անվտանգության միջոցառումների իրականացում,</li> <li>7. Էլեկտրաէներգիայի հաշվեկշիռների կազմում, վերլուծություն, էներգախնայողության ներուժի գնահատում, միջոցառումների ծրագրավորում և իրականացում,</li> <li>8. Էլեկտրամատակարարման համակարգում ռեակտիվ հզորության կոմպենսացման և լարման կարգավորման մշակում և իրականացում,</li> <li>9. Էլեկտրաէներգիայի որակի բարելավման միջոցառումների մշակում և իրականացում,</li> <li>10. Էլեկտրամատակարարման համակարգի ռելեական պաշտպանության, ավտոմատիկայի և դեկավարման սարքավորումների տեղակայում, կարգաբերում և փորձարկում, շահագործում և վերանորոգում, անսարքությունների, խափանումների և այլ թերությունների բացահայտում և վերացում,</li> <li>11. հողանցման սարքավորումների, գերլարումներից ու թափառող հոսանքներից պաշտպանությունների մշակում և իրականացում,</li> <li>12. անհրաժեշտ փաստաթղթերի ձևակերպում:</li> </ol>

<b>Խնդիրների բնագավառ 1. Առաջադրված խնդրի ձևակերպում և կոնկրետացում</b>	
<b>Աշխատանքային գործընթացը</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Էլեկտրամատակարարման սարքավորումների և էլեկտրաընդունիչների տեղակայման և վերակառուցման նախագծային փաստաթղթերի ծանոթացում և առաջադրված խնդրի կոնկրետացում,</li> <li>• խնդրի լուծման եղանակի, անհրաժեշտ սարքավորումների, գործիքների և նյութերի տեսակների ու քանակների որոշում,</li> <li>• աշխատանքների պլանավորում:</li> </ul>
<b>Կատարման չափանիշները</b>	<ul style="list-style-type: none"> <li>• կոնկրետացված է էլեկտրամատակարարման սարքավորումների և էլեկտրաընդունիչների տեղակայման, վերանորոգման և վերակառուցման առաջադրանքը,</li> <li>• որոշված է խնդրի լուծման եղանակը, անհրաժեշտ սարքավորումների, գործիքների և նյութերի տեսակները ու քանակները,</li> <li>• որոշված են կատարվող աշխատանքների ծավալները և կատարման ժամկետները:</li> </ul>
<b>Խնդիրների բնագավառ 2. Էլեկտրամատակարարման սարքավորումների և էլեկտրաընդունիչների սպասարկում, վերանորոգում, տեղակայում, կարգաբերում, շահագործում և վերակառուցում նորմատիվային, նախագծային, տեխնիկական և տեխնոլոգիական փաստաթղթերով սահմանված պահանջների կատարում</b>	
<b>Աշխատանքային գործընթացը</b>	<ul style="list-style-type: none"> <li>• աշխատանքների իրականացում՝ նախագծային առաջադրանքի համապատասխան (էլեկտրամատակարարման սարքավորումների և էլեկտրաընդունիչների տեղակայման վայր, մակնիշ, տեսակ և այլն),</li> <li>• աշխատանքների իրականացում՝ նորմատիվային տեխնիկական և տեխնոլոգիական փաստաթղթերով սահմանված հաջորդականությամբ և անվտանգության միջոցառումների ապահովմամբ (հոսանքահա-րումից պաշտպանության միջոցներ, մեկուսացման տարածության պահպանում և այլն),</li> <li>• աշխատանքների ձևակերպում՝ նորմատիվային պահանջներին համապատասխան փաստաթղթերով:</li> </ul>
<b>Կատարման չափանիշները</b>	<ul style="list-style-type: none"> <li>• աշխատատեղը նախապատրաստված է նորմատիվային տեխնիկա-կան և տեխնոլոգիական փաստաթղթերի պահանջներին համապատասխան,</li> <li>• աշխատանքները իրականացված են նախագծային առաջադրանքին համապատասխան,</li> <li>• աշխատանքները իրականացված են նորմատիվային տեխնիկական և տեխնոլոգիական փաստաթղթերով նախատեսված հաջորդակա-նությամբ,</li> <li>• աշխատանքները կատարված են անվտանգության պահանջներին համապատասխան,</li> <li>• աշխատանքների ավարտից հետո աշխատավայրը համապատասխանեցված է ներկայացվող պահանջներին,</li> </ul>

	<ul style="list-style-type: none"> <li>աշխատանքները ձևակերպված են Լորմատիվային պահանջներին համապատասխան:</li> </ul>
<b>Խնդիրների բնագավառ 3. Նախապատրաստական աշխատանքների իրականացում</b>	
<b>Աշխատանքային գործընթացը</b>	<ul style="list-style-type: none"> <li>աշխատանքների իրականացման վայրի զննում,</li> <li>տեղակայման ենթակա էլեկտրամատակարարման սարքավորումների և էլեկտրաընդունիչների զննում, թերությունների բացահայտում,</li> <li>անհրաժեշտ նյութերի, գործիքների և տեխնիկայի նախապատրաստում,</li> <li>տեղակայվող էլեկտրամատակարարման սարքավորումների և էլեկտրաընդունիչների ու այլ կոմունիկացիոն համակարգերի էլեկտրամագնիսական համատեղելիության ստուգում:</li> <li>աշխատանքների իրականացման վայրի նախապատրաստում՝ ապահովելով անվտանգության անհրաժեշտ միջոցառումները (փոխանջատումներ, պաշտպանիչ հողանցում, վրան, նախազգուշացնող և արգելիչ ցուցանակներ և այլն):</li> </ul>
<b>Կատարման չափանիշները</b>	<ul style="list-style-type: none"> <li>կատարված է աշխատանքների իրականացման վայրի զննում,</li> <li>իրականացված է տեղակայման ենթակա էլեկտրամատակարարման սարքավորումների և էլեկտրաընդունիչների զննում, բացահայտված և վերացված են թերությունները,</li> <li>նախապատրաստված են անհրաժեշտ նյութերը, գործիքները և տեխնիկան,</li> <li>ստուգված է տեղակայվող էլեկտրամատակարարման սարքավորումների և էլեկտրաընդունիչների ու այլ կոմունիկացիոն համակարգերի էլեկտրամագնիսական համատեղելիությունը,</li> <li>նախապատրաստված է աշխատանքների իրականացման վայր:</li> </ul>
<b>Խնդիրների բնագավառ 4. Էլեկտրամատակարարման սարքավորումների և էլեկտրաընդունիչների տեխնիկական վիճակի գնահատում և վերլուծություն</b>	
<b>Աշխատանքային գործընթացը</b>	<ul style="list-style-type: none"> <li>էլեկտրամատակարարման սարքավորումների և էլեկտրաընդունիչների ակնադիտական և գործիքային զննում ու թերությունների բացահայտում,</li> <li>էլեկտրամատակարարման սարքավորումների տեխնիկական վիճակի գնահատում,</li> <li>էլեկտրաընդունիչների տեխնիկական վիճակի գնահատում,</li> <li>էլեկտրամատակարարման սարքավորումների տեխնիկական վիճակի վերլուծում,</li> <li>էլեկտրաընդունիչների տեխնիկական վիճակի վերլուծում:</li> </ul>
<b>Կատարման չափանիշները</b>	<ul style="list-style-type: none"> <li>էլեկտրամատակարարման սարքավորումների և էլեկտրաընդունիչների զննումը կատարված է սահմանված ծավալով և ժամկետներում,</li> <li>կատարված է էլեկտրամատակարարման սարքավորումների տեխնի-</li> </ul>

	<p>կական վիճակի գնահատում,</p> <ul style="list-style-type: none"> <li>• իրականացված է էլեկտրաընդունիչների տեխնիկական վիճակի գնահատում,</li> <li>• բացահայտված և բնութագրված են առկա թերությունները,</li> <li>• կատարված է էլեկտրամատակարարման սարքավորումների տեխնիկական վիճակի վերլուծում և որոշված են թերությունները վերացնելու ուղիները:</li> </ul>
--	--

**Խնդիրների բնագավառ 5. Էլեկտրամատակարարման սարքավորումների և էլեկտրաընդունիչների տեղակայում, վերակառուցում, կարգաբերում և փորձարկում, շահագործում ու վերանորոգում, անսարքությունների, խափանումների և այլ թերությունների բացահայտում և վերացում**

<p><b>Աշխատանքային գործընթացը</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Էլեկտրամատակարարման սարքավորումների տեղակայում և վերակառուցում նախագծային առաջադրանքին համապատասխան. <ul style="list-style-type: none"> <li>➤ Էլեկտրամատակարարման սարքավորումների (ուժային տրանսֆորմատոր, օդային և մալուխային գծեր, բաշխիչ սարքավորումներ, անջատիչներ, բաժանիչներ, հողանցումներ և այլն) տեղակայման աշխատանքների իրականացում,</li> <li>➤ մթնոլորտային և կոմուտացիոն գերլարումներից պաշտպանիչ սարքավորումների (պարպիչներ, ամպրոպապաշտպան կայմեր ու ճոպանի) տեղակայում,</li> <li>➤ տեղակայվող էլեկտրասարքավորումները այլ սարքավորումներին միացում,</li> <li>➤ նախագծով նախատեսված այլ աշխատանքների կատարում,</li> </ul> </li> <li>• Էլեկտրաընդունիչների տեղակայում՝ նախագծային պահանջներին համապատասխան. <ul style="list-style-type: none"> <li>➤ Էլեկտրաընդունիչ սարքավորումների (շարժիչներ, էլեկտրավառարաններ, լուսատուներ, ուժային և կառավարման վահանակներ և այլն) տեղակայման աշխատանքների իրականացում,</li> <li>➤ տեղակայվող էլեկտրաընդունիչը այլ էլեկտրասարքավորումներին միացում,</li> <li>➤ գերլարումներից պաշտպանիչ սարքավորումների տեղակայում,</li> <li>➤ նախագծով նախատեսված այլ աշխատանքների կատարում,</li> <li>➤ պաշտպանական հողանցման տեղակայում,</li> </ul> </li> <li>• Էլեկտրամատակարարման սարքավորումների և էլեկտրաընդունիչների կարգաբերում և փորձարկում,</li> <li>• Էլեկտրամատակարարման սարքավորումների սնող ցանցին միացում և ընդհանուր համակարգում էլեկտրասարքավորումների աշխատանքի ստուգում,</li> </ul>
---------------------------------------	---

	<ul style="list-style-type: none"> <li>• Էլեկտրաընդունիչների Էլեկտրամատակարարման սարքավորումներին միացում և ընդհանուր համակարգում Էլեկտրասարքավորում-ների աշխատանքի ստուգում,</li> <li>• Էլեկտրաէներգիայի հաշվառման համակարգի տեղակայում՝ նախա-գծային պահանջներին համապատասխան,</li> <li>• Էլեկտրամատակարարման սարքավորումների և Էլեկտրաընդունիչ-ների շահագործման և սպասարկման աշխատանքները ըստ սահման-ված տեսակների և ժամկետների կատարում, այդ թվում. <ul style="list-style-type: none"> <li>➢ Էլեկտրամատակարարման սարքավորումների և Էլեկտրաընդունիչների պարբերական և արտահերթ զննում,</li> <li>➢ Էլեկտրամատակարարման սարքավորումների, Էլեկտրաընդունիչների և հաշվառման համակարգի վիճակի ընտրովի ստուգում,</li> <li>➢ բոլոր Էլեկտրամատակարարման սարքավորումների և Էլեկտրաընդունիչների,ամպրոպապաշտպան և գերլարումներից պաշտ-պանող սարքավորումների հողանցման դիմադրության չափում,</li> <li>➢ Էլեկտրամատակարարման սարքավորումների և Էլեկտրաընդունիչների կարգաբերում, սահմանազատման տարածությունների ստուգում,</li> </ul> </li> <li>• Էլեկտրամատակարարման սարքավորումների և Էլեկտրաընդունիչ-ների վերանորոգման աշխատանքներ ըստ սահմանված տեսակների և ժամկետների կատարում, այդ թվում. <ul style="list-style-type: none"> <li>➢ Էլեկտրամատակարարման սարքավորումների և Էլեկտրաընդունիչների միացումների ձգում,</li> <li>➢ անսարք Էլեկտրամատակարարման սարքավորումների և Էլեկտրաընդունիչների վերանորոգում կամ փոխարինում,</li> <li>➢ Էլեկտրամատակարարման սարքավորումների, Էլեկտրաընդունիչների և հաշվառման սարքավորումների վնասվածների բացա-հայտում, վերացում, հեղույսային միացումների ձգում, կապիտալ վերանորոգում,</li> </ul> </li> <li>• տեխնիկական կանոնակարգերով և անվտանգության կանոններով սահմանված ռեժիմների ու պայմանների պահպանման հետևում,</li> <li>• Էլեկտրամատակարարման սարքավորումների, Էլեկտրաընդունիչների և հաշվառման համակարգի անսարքությունների և խնդիրների բացահայտման աշխատանքների իրականացում,</li> <li>• անսարքության պատճառը, բնույթը, ծավալը և բարդության որոշումը,</li> <li>• անսարքության վերացման հնարավորությունը, աշխատանքների կատարման տեղը և ծավալները, անհրաժեշտ պահեստամասերի, սարքավորումների, կյուլթերի օգտագործման գնահատում:</li> </ul>
<b>Կատարման</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Էլեկտրամատակարարման սարքավորումների և Էլեկտրաընդունիչ-ների</li> </ul>

<p><b>չափանիշները</b></p>	<p>տեղակայումը, նորմատիվային և նախագծային պահանջներին համապատասխան կատարված է,</p> <ul style="list-style-type: none"> <li>• սնող ցանցին միացումը կատարված է նորմատիվային պահանջներին համապատասխան,</li> <li>• էլեկտրաընդունիչների միացումը էլեկտրամատակարարման սարքավորումներին ըստ նորմատիվային պահանջներին համապատասխան կատարված է,</li> <li>• էլեկտրամատակարարման սարքավորումների և էլեկտրաընդունիչների փորձարկման նպատակը ճիշտ է սահմանված, փորձարկումները կատարելու համար անհրաժեշտ բոլոր պայմաններն ապահովված են,</li> <li>• էլեկտրամատակարարման սարքավորումների և էլեկտրաընդունիչների փորձարկման արդյունքները սահմանված ընթացակարգին համապատասխան (փորձարկման արձանագրություն, թերության ակտ և այլ) ամփոփված և ձևակերպված են:</li> <li>• էլեկտրամատակարարման սարքավորումների, էլեկտրաընդունիչների և հաշվառման համակարգի շահագործման, սպասարկման և վերանորոգման աշխատանքները ըստ սահմանված տեսակների և ժամկետների կատարված են,</li> <li>• տեխնիկական կանոնակարգերով և անվտանգության կանոններով սահմանված ռեժիմները ու պայմանները պահպանված են:</li> <li>• էլեկտրամատակարարման սարքավորումների, էլեկտրաընդունիչների և հաշվառման համակարգի անսարքությունները բացահայտված են,</li> <li>• անսարքության վերացման հնարավորությունը, աշխատանքների կատարման տեղը, անհրաժեշտ պահեսատմասերի, սարքավորումների, նյութերի և աշատանքների ծավալները գնահատված են :</li> </ul>
<p><b><u>Խնդիրների բնագավառ 6. Էլեկտրասարքավորումների և սարքերի շահագործման անվտանգության միջոցառումների իրականացում</u></b></p>	
<p><b>Աշխատանքային գործընթացը</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• էլեկտրամատակարարման սարքավորումների, էլեկտրաընդունիչների շահագործող անձնակազմին ներկայացվող պահանջների ներկայացում,</li> <li>• Շահագործող և սպասարկող անձնակազմին` ըստ անվտանգության տեխնիկայի դասակարգման խմբերի ներկայացում,</li> <li>• 1000Վ-ից բարձր էլեկտրամատակարարման սարքավորումների, էլեկտրաընդունիչների շահագործման անվտանգության տեխնիկական միջոցառումների ներկայացում,</li> <li>• 1000Վ-ից բարձր էլեկտրամատակարարման սարքավորումների, էլեկտրաընդունիչների շահագործման անվտանգության կազմակերպչական միջոցառումների ներկայացում,</li> <li>• 1000Վ-ից ցածր էլեկտրամատակարարման սարքավորումների, էլեկ-</li> </ul>

	<p>տրաընդունիչների շահագործման անվտանգության տեխնիկական միջոցառումների ներկայացում,</p> <ul style="list-style-type: none"> <li>• 1000Վ-ից ցածր էլեկտրամատակարարման սարքավորումների, էլեկտրաընդունիչների շահագործման անվտանգության կազմակերպչա-կան միջոցառումների ներկայացում,</li> <li>• Էլեկտրական հոսանքից պաշտպանական միջոցառումների ներկայա-ցում:</li> </ul>
<p><b>Կատարման չափանիշները</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Էլեկտրամատակարարման սարքավորումների, էլեկտրաընդունիչ-ների շահագործող անձնակազմին ներկայացվող պահանջները ներ-կայացված է,</li> <li>• շահագործող և սպասարկող անձնակազմին` ըստ անվտանգության տեխնիկայի դասակարգման խմբերը որոշված են,</li> <li>• 1000Վ-ից բարձր էլեկտրամատակարարման սարքավորումների, էլեկտրաընդունիչների շահագործման անվտանգության տեխնիկական վիճակը նահատված է,</li> <li>• 1000Վ-ից բարձր էլեկտրամատակարարման սարքավորումների, էլեկտրաընդունիչների շահագործման անվտանգության կազմակերպչական միջոցառումները գնահատված են,</li> <li>• ներկայացված են 1000Վ-ից ցածր էլեկտրամատակարարման սարքավորումների, էլեկտրաընդունիչների շահագործման անվտանգության տեխնիկական և կազմակերպչական միջոցառումները,</li> <li>• Էլեկտրական հոսանքից պաշտպանական միջոցառումները ներկա-յացված է:</li> </ul>
<p><b>Խնդիրների բնագավառ 7. ԷլեկտրաԷներգիայի հաշվեկշիռների կազմում, վերլուծություն, Էներգախնայողության ներուժի գնահատում, միջոցառումների ծրագրավորում և իրակա-նացում</b></p>	
<p><b>Աշխատանքային գործընթացը</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• ԷլեկտրաԷներգիայի հաշվառմանը ներկայացվող պահանջների ներկայացում,</li> <li>• միաֆազ, եռաֆազ և հատուկ տարիֆներով հաշվիչների աշխատանքի սկզբունքների ու նրանց միացման սխեմաների ներկայացում,</li> <li>• ԷլեկտրաԷներգիայի հաշվեկշիռների ըստ առանձին հանգույցների կազմում և վերլուծում,</li> <li>• Էներգախնայողության ներուժի օբյեկտները և ձավալները բացահայտում,</li> <li>• ՀՀ ազգային ստանդարտներին համապատասխան ձեռնարկության (ընկերության) Էներգետիկ անձնագիրի կազմում,</li> <li>• Էներգախնայողության միջոցառումների ծրագրերի մշակում և իրականացում:</li> </ul>
<p><b>Կատարման չափանիշները</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• առանձին հանգույցների և ընդհանուր էլեկտրաԷներգիայի հաշվեկշիռները կազմված է,</li> <li>• ներկայացված են միաֆազ, եռաֆազ և հատուկ տարիֆներով հաշվիչների</li> </ul>

	<p>աշխատանքի սկզբունքները ու նրանց միացման սխեմաները,</p> <ul style="list-style-type: none"> <li>• ձեռնարկության (ընկերության) էներգետիկ անձնագիրը բնութագրված է,</li> <li>• էներգախնայողության ներուժը գնահատված է,</li> <li>• էներգախնայողության միջոցառումները մշակված են:</li> </ul>
<p><b>Խնդիրների բնագավառ 8</b> Էլեկտրամատակարարման համակարգում հզորության գործակցի բարելավման և լարման կարգավորման մշակում և իրականացում</p>	
<p><b>Աշխատանքային գործընթացը</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• արտադրական ձեռնարկությունների, արտադրամասերի էլեկտրաընդունիչի ռեակտիվ հզորության որոշում,</li> <li>• ռեակտիվ հզորության սպառման նվազեցման միջոցառումների մշակում,</li> <li>• ռեակտիվ հզորության սպառման նվազեցման սարքավորումների ներկայացում,</li> <li>• ռեակտիվ հզորության կոմպենսացման սկզբունքների և հաշվարկների ներկայացում,</li> <li>• կոնդեսատորային մարտկոցների միացման սխեմաների ցուցադրում և դրանց տեղադրման վայրի որոշում,</li> <li>• լարման մակարդակի, շեղման և տատանման որոշում,</li> <li>• լարման կարգավորման միջոցառումների մշակում:</li> </ul>
<p><b>Կատարման չափանիշները</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• արտադրական ձեռնարկությունների, արտադրամասերի ու էլեկտրաընդունիչի ռեակտիվ հզորությունը որոշված է,</li> <li>• մշակված է ռեակտիվ հզորության սպառման նվազեցման միջոցառումները և սարքավորումները,</li> <li>• ներկայացված է ռեակտիվ հզորության կոմպենսացման սկզբունքները և հաշվարկները,</li> <li>• ցուցադրված է կոնդեսատորային մարտկոցների միացման սխեմաները և որոշված է դրանց տեղադրման վայրը,</li> <li>• որոշված է լարման մակարդակի շեղման և տատանման արժեքները,</li> <li>• մշակված է լարման կարգավորման միջոցառումները:</li> </ul>
<p><b>Խնդիրների բնագավառ 9.</b> Էլեկտրաէներգիայի որակի բարելավման միջոցառումների մշակում և իրականացում</p>	
<p><b>Աշխատանքային գործընթացը</b></p>	<p>Լարման որակի բարելավման միջոցառումների կատարում</p> <ul style="list-style-type: none"> <li>• ռեակտիվ հզորության կոմպենսացիա,</li> <li>• սպառման ռեժիմների բարելավում,</li> <li>• էլեկտրամատակարարման ցանցի սիմետրիկացում,</li> <li>• տարբեր տեսակի ֆիլտրերի կիրառում,</li> <li>• բազմատրանսֆորմատորային ենթակայաններում տրասֆորմատորների ռեժիմների ընտրում,</li> <li>• տրասֆորմատորների անցապահների փոխմիացում,</li> </ul>



	<ul style="list-style-type: none"> <li>• և այլ միջոցառումներ:</li> </ul>
<b>Կատարման չափանիշները</b>	<ul style="list-style-type: none"> <li>• ռեակտիվ հզորության կոմպետացիան կատարված է,</li> <li>• սպառման ռեժիմների բարելավումը կատարված է,</li> <li>• էլեկտրամատակարարման ցանցի սիմետրիկացումը մշակված է,</li> <li>• ցուցադրված է տարբեր տեսակի ֆիլտրերը,</li> <li>• տրասֆորմատորների ռեժիմների ընտրությունը մշակված է,</li> <li>• տրասֆորմատորների անցապահների փոխմիացումները կատարված է:</li> </ul>
<b>Խնդիրների բնագավառ 10. Էլեկտրամատակարարման համակարգի ռելեական պաշտպանության, ավտոմատիկայի և ղեկավարման սարքավորումների տեղակայում, կարգաբերում և փորձարկում, շահագործում և վերանորոգում, անսարքությունների, խափանումների և այլ թերությունների բացահայտում և վերացում</b>	
<b>Աշխատանքային գործընթացը</b>	<ul style="list-style-type: none"> <li>• ռելեական պաշտպանության նշանակության ու դրանց սևման աղբյուրներ ներկայացումը,</li> <li>• ռելեների հիմնական տեսակների և նրանց նշանակության բացատրումը,</li> <li>• Էլեկտրամատակարարման սարքավորումների և էլեկտրաընդունիչների ռելեական պաշտպանության ներկայացում՝ <ul style="list-style-type: none"> <li>➢ տրանսֆորմատորների ռելեական պաշտպանությունը,</li> <li>➢ շարժիչների ռելեական պաշտպանությունը,</li> <li>➢ օդաին և մալուխային գծերի ռելեական պաշտպանությունը,</li> </ul> </li> <li>• ավտոմատիկային ներկայացվող հիմնական պահանջների դիտարկումը,</li> <li>• Էլեկտրամատակարարման համակարգի ավտոմատացման տեսակների ներկայացում՝ <ul style="list-style-type: none"> <li>➢ պահեստի ավտոմատ միացումը,</li> <li>➢ կրկնակի ավտոմատ միացումը,</li> <li>➢ ըստ հաճախության և հոսանքի ավտոմատ բեռնաթափումը,</li> <li>➢ կոնդեսատորային մարտկոցների ավտոմատ աշխատանքը,</li> </ul> </li> <li>• Էլեկտրամատակարարման սարքավորումների և էլեկտրաընդունիչների ղեկավարման, ազդանշանման և հսկման համակարգերի ներկայացումը,</li> </ul>
<b>Կատարման չափանիշները</b>	<ul style="list-style-type: none"> <li>• ներկայացված է ռելեական պաշտպանության նշանակությունը, տեսակները և դրանց սևման աղբյուրները,</li> <li>• ռելեների հիմնական տեսակները և նրանց նշանակությունը ներկայացված է,</li> <li>• տրված է տրանսֆորմատորների ռելեական պաշտպանությունը,</li> <li>• բերված է շարժիչների ռելեական պաշտպանությունը,</li> <li>• ցույց է տրված մալուխային գծերի ռելեական պաշտպանությունը,</li> <li>• դիտարկված է ավտոմատիկային ներկայացվող հիմնական պահանջները,</li> <li>• ցույց է տրված պահեստի ավտոմատ միացումը,</li> </ul>

	<ul style="list-style-type: none"> <li>• ցույց է տրված կրկանակի ավտոմատ միացումը,</li> <li>• կոնդենսատորային մարտկոցների ավտոմատ աշխատանքը ներկայացված է,</li> <li>• էլեկտրամատակարարման սարքավորումների և էլեկտրաընդունիչ-ների ղեկավարումը, ազդանշանումը և հսկումը համակարգերը ներկայացված է:</li> </ul>
<b>Խնդիրների բնագավառ 11. Հողանցման սարքավորումների, գերլարումներից ու թափառող հոսանքներից պաշտպանությունների մշակում և իրականացում,</b>	
<b>Աշխատանքային գործընթացը</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Արհեստական և բնական հողանցման սարքերի նշանակության բացատրում,</li> <li>• հողակցման սարքավորումների հաշվարկման նկարագրում,</li> <li>• Գերլարման պատճառները և դրանից պաշտպանության միջոցները,</li> <li>• շենքերի ու շինությունների շանթապաշտպանության կատարումը,</li> <li>• ներգետնյա կառույցների պաշտպանության իրականացումը:</li> </ul>
<b>Կատարման չափանիշները</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Արհեստական և բնական հողանցման սարքերի նշանակությունը բացատրված է,</li> <li>• հողակցման սարքավորումների հաշվարկը նկարագրված է,</li> <li>• նկարագրված է հողակցման սարքավորումների հաշվարկը,</li> <li>• ներկայացված է գերլարումը և դրանից պաշտպանության ձևերը,</li> <li>• կատարված է շենքերի ու շինությունների շանթապաշտպանություն-ը,</li> <li>• իրականացված է ներգետնյա կառույցների պաշտպանությունը:</li> </ul>
<b>Խնդիրների բնագավառ 12. Անիրաժեշտ փաստաթղթերի ձևակերպում</b>	
<b>Աշխատանքային գործընթացը</b>	<ul style="list-style-type: none"> <li>• էլեկտրամատակարարման սարքավորումների, էլեկտրաընդունիչ-ների և հաշվառման համակարգի զննման, փորձարկման և անսարքությունների բացահատման ու վերացման արդյունքների ամփոփ փաստաթղթերի՝ սահմանված ձևերով և ժամկետներում կազմում,</li> <li>• տեղակայման և վերանորոգման աշխատանքների ավարտից հետո հանձնման ընդունման ակտերի՝ համաձայն գործող ստանդարտների և նորմատիվային փաստաթղթերի կազմում:</li> </ul>
<b>Կատարման չափանիշները</b>	<p>Պահանջագրերը, հաշվետվությունները, ամփոփագրերը, աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրերը, հանձնման ընդունման ակտերը, անսարքությունների ակտերը, տեխնիկական վերահսկողության այլ փաստաթղթերը լրացված և կազմված են գործող նորմատիվային փաստաթղթերին համապատասխան:</p>
<b>Պատասխանատվությունը /անմիջակա պատասխանատվության շրջանակ/</b>	<p>էլեկտրամատակարարման սարքավորումների և էլեկտրաընդունիչների տեղակայման, վերակառուցման, կարգաբերման և փորձարկման, շահագործման ու վերանորոգման տեխնիկ- էլեկտրիկը պատասխանատու է.</p> <ul style="list-style-type: none"> <li>• տեղակայման և վերանորոգման աշխատանքները ժամանակին, ամբողջությամբ և որակյալ կատարելու համար,</li> </ul>

	<ul style="list-style-type: none"> <li>• Նյութերը խնայողաբար օգտագործելու համար,</li> <li>• անսարքությունները ճիշտ որոշելու համար,</li> <li>• չափիչ-ստուգիչ սարքերն ու գործիքներն անխափան աշխատելու համար,</li> <li>• իր սպասարկման տարածքում գտնվող գնահատում էլեկտրամատակարարման սարքավորումների, էլեկտրաընդունիչների և հաշվառման համակարգի հուսալի և անխափան աշխատանքի համար,</li> <li>• շահագործման և անվտանգության կանոնների պահպանումն ապահովելու համար,</li> <li>• էլեկտրաէներգետիկական հաշվեկշիռների կազմման և էներգախնայողական միջոցառումների մշակման համար,</li> <li>• լարման որակի բարելավման համար,</li> <li>• իրեն վերապահված գործառույթների վերաբերյալ փաստաթղթերը և ակտերը գործող նորմատիվներին համապատասխան կազմելու համար,</li> <li>• անհրաժեշտ տեխնիկական օգնություն և խորհրդատվություն տրամադրելու համար,</li> <li>• համապատասխան տեղեկությունները վերադասին ժամանակին և սահմանված կարգով տրամադրելու համար,</li> <li>• աշխատանքը կազմակերպելու և աշխատանքային կարգապահությունը ապահովելու համար:</li> </ul>
<b>Լեզուները</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Հայերեն՝ գերազանց,</li> <li>• առաջին օտար լեզու՝ բավարար,</li> <li>• երկրորդ օտար լեզու՝ բավարար:</li> </ul>
<b>Համակարգիչը</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Տեքստերի հավաքում՝ բավարար,</li> <li>• աղյուսակների կազմում՝ բավարար,</li> <li>• ինտերնետից օգտվել:</li> </ul>
<b>Գիտելիքը</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Գծագրություն,</li> <li>• չափագիտություն,</li> <li>• էլեկտրատեխնիկայի հիմունքներ,</li> <li>• էլեկտրատեխնիկական նյութեր,</li> <li>• էլեկտրական մեքենաներ,</li> <li>• էլեկտրական սարքավորումներ,</li> <li>• էլեկտրական ցանցեր,</li> <li>• էլեկտրատեխնիկական չափիչ սարքավորումներ և գործիքներ,</li> <li>• արտադրության կազմակերպում, էկոնոմիկա և կառավարում,</li> <li>• էլեկտրատեղակայանքների սարքավորման կանոններ,</li> <li>• աշխատանքի պաշտպանություն և անվտանգության տեխնիկայի կանոններ:</li> </ul>
<b>Կարողությունները</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Աշխատանքի տեղում աշխատողների գործունեությունը կազմակերպելու, նրանց հնարավորությունները ճիշտ օգտագործելու կարողություն,</li> </ul>

<p><b>հմտությունները</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• իրավիճակին համապատասխան մասնագիտական տեղեկություն-ներ տրամադրելու, առկա տեղեկությունների հիման վրա եզրահան-գումներ կատարելու կարողություն,</li> <li>• աշխատանքների կատարման առավել արդյունավետ տարբերակները ընտրելու կարողություն,</li> <li>• փոփոխվող աշխատանքային պայմաններում հիմնավոր որոշումներ կայացնելու և վերլուծություններ կատարելու կարողություն,</li> <li>• էլեկտրատեխնիկական չափիչ գործիքներ ու սարքեր օգտագործելու հմտություն,</li> <li>• էլեկտրական շղթաների, էլեկտրական սարքավորումների պարա-մետրերը չափելու, գրանցելու և վերլուծելու կարողություն,</li> <li>• սարքավորումների անսարքությունների պատճառները բացահայտ-ման և վերացման, փորձարկման և կարգավորման աշխատանքներ կատարելու հմտություններ,</li> <li>• սարքավորումները տեղակայելու կարողություն,</li> <li>• էլեկտրամատակարարման սարքավորումների, էլեկտրաընդունիչ-ների, հաշվառման համակարգի, պաշտպանիչ սարքավորումների և հողանցման համակարգի տեղա-կայման աշխատանքներ կատարելու կարողություն,</li> <li>• նորմատիվ փաստաթղթերից և ակտերից, տեղեկատու գրակա-նությունից օգտվելու հմտություն,</li> <li>• գծագրերը և սխեմաները կարդալու հմտություն,</li> <li>• հաշվեկշիռների, հաշվետվություններ և այլ փաստաթղթեր կազմելու հմտություն:</li> </ul>
<p><b>VIII. Անձի որակական հատկանիշներ</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• պարտաճանաչություն,</li> <li>• կարգապահություն,</li> <li>• ուշադրություն և դիտողունակություն,</li> <li>• վերլուծական մտածողություն,</li> <li>• համագործակցելու պատրաստակամություն,</li> <li>• հանդուրժողականություն,</li> <li>• նորն ընդունելու պատրաստակամություն,</li> <li>• հետաքրքրություն նորագույն տեխնիկայի նկատմամբ:</li> </ul>